ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ՝ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ (6 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1985 ԹՎԱԿԱՆԻ) ՄԻ ՇԱՐՔ ՀՈԴՎԱԾ-ՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱ-ՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված՝ ՀՀ մարդու իրավունք-ների պաշտպանի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985 թվականի) մի շարք հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ դիմումը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից հետ վերցնելու մասին 2010 թվականի հոկտեմբերի 25-ի N 2-0234 դիմումը եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին վերադարձնել իր՝ 10.06.2010թ. N 2-0234 դիմումը:

2. Հաշվի առնելով, որ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախ-տումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985 թվականի) մի շարք հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» եւ «Քաղաքացի Թ. Դերմենջյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը միավորվել են, ուստի «Քաղաքացի Թ. Դերմենջյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմ-անադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն առանձնացնել «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (6 դեկտեմբերի 1985 թվականի) մի շարք հոդվածների՝ ՀՀ Սահմանա-դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործից եւ քննել սահմանադրական դատարանի կողմից նախկինում նշանակված՝ 2010 թվականի նոյեմբերի 16-ի նիստում (ժամը 11.00-ին):

3. Այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի հունիսի 18-ի ՍԴԱՈ-65 աշխատակարգային որոշումը, ինչպես նաեւ 2010 թվականի հունիսի 25-ի ՍԴԱՈ-71 աշխատակարգային որոշման 1-ին կետը:

4. ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմին՝ սահմանված կարգով վերադարձնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2010 թվականի հունիսի 10-ի N 2-0234 դիմումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 նոյեմբերի 2010 թվականի
ՍԴԱՈ -102